

Դեկտեմբերի 15-ին Ա.Պ. Չեխովի անվան դպրոցի Ա.Պ.Չեխովի անվան դասասենյակում տեղի ունեցավ ԻՄ ԴՊՐՈՑ կայքի շնորհանդեսը, որը նախատեսված էր դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և տեղեկատվական ոլորտում աշխատող ծնողների համար: Միջոցառումը բացեց դպրոցի տնօրեն Գ.Սարուխանյանը և ապա խոսքը փոխանցեց Հ.Հ. կրթության և գիտության փոխնախարար Կ.Հարությունյանին, որը հանգամանորեն ներկայացրեց ԻՄ ԴՊՐՈՑ կայքի, որպես կրթական միջոցի և միջավայրի առանձնահատկությունները, նրա օգտագործումից ակնկալվող փոփոխությունները կրթական համակարգում: Իր ելույթում տիկին Հարությունյանը նշեց, որ այսօրվա աշակերտը ապրում և զարգանում է տեղեկատվությամբ գերհագեցած միջավայրում, համացանցային ռեսուրսների ակտիվ օգտագործող է, սակայն միշտ չէ, որ ստանում է ստուգված և ճշգրիտ ինֆորմացիա: Ուսումնական բնույթի տեղեկությունները, որն աշակերտին տրվում է դպրոցում, տեղեկատվական այս հոսքում օրըստօրե ավելի համեստ տեղ է զբաղեցնում: Առաջացած այս բացը լրացնելու, աշակերտին ուսումնական գործընթացին ներգրավելու համար, պետք է կիրառել այնպիսի մոտեցումներ, որոնք կհամապատասխանեն երեխայի նախասիրություններին և կմրցեն այն ավելորդ տեղեկատվության հետ, ինչը հեռացնում է աշակերտին դպրոցից, գրավելով նրա ժամանակի մեծ մասը: ԻՄ ԴՊՐՈՑ կայքի գործունեությունը ուղղված է այդ նպատակին, վստահ , որ օգտվելով կայքից երեխաները կսովորեն հեշտությամբ և հաճույքով, արդյունքում կունենան խորը գիտելիքներ և բարձր առաջադիմություն: ԻՄ ԴՊՐՈՑ կայքի օգտատերերն են ոչ միայն աշակերտները, այլև նրանց ուսուցիչները և ծնողները: Ներկայումս կայքն ակտիվորեն օգտագործում են Գերմանիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Լատվիայի իսկ 2015թ-ից նաև Հայաստանի աշակերտները, ուսուցիչները և ծնողները: Այսօր բավականին լուրջ հարց է աշակերտների կողմից տնային հանձնարարությունների կատարումը, ուսուցչի կողմից դրա վերահսկողությունը՝ իսկ ծնողների կողմից իրենց երեխաների ստացած գիտելիքների օբյեկտիվ գնահատումը: Չէ՞ որ, հիմնականում տնային առաջադրանքները կատարելու ընթացքում է դասի ժամանակ ստացած ինֆորմացիան դառնում գիտելիք: Երբ աշակերտը այդ առաջադրանքները կատարելու ընթացքում չի ստանում իր հարցի պատասխանը, նա լավագույն դեպքում դիմում է ինչ որ մեկի օգնությանը, փնտրում լուծումներ համացանցում, / շատ դեպքում սխալ /, բայց ավելի հաճախ ուղղակի չի կատարում առաջադրանքը, արտագրում է ընկերներից: Արդյունքում այն չի ծառայում իր նպատակին և դառնում տհաճ պարտականություն: ԻՄ ԴՊՐՈՑ կայքը պարունակելով 1մլն-ից ավելի առաջադրանքներ՝ իրենց լուծումներով և բացատրություններով, 9 ուսումնական առարկաներից, դառնում է իսկական վարժասարք: Այն նպաստում է **աշակերտների** գիտելիքների խորացմանը, խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը: Ընդ որում այդ ամենը իրականացվում է ինքնուսուցմամբ, պարունակում է խաղի տարրեր, ընթացքում ծավալում է մրցույթ կայքից օգտվող նույն տարիքի բոլոր մասնակիցների միջև: Դա նույնպես խթանում է ուսուցման գործընթացը, և աշակերտները ոչ թե արտագրում են դասընկերներից՝ այլ մրցում նրանց հետ: **Ուսուցիչներին** կայքը օգնում է մոտիվացնող և ակտիվ ճանաչողական գործընթացի մղել աշակերտներին, էլեկտրոնային տարբերակով տնային աշխատանքներ հանձնարարել և վերահսկել: Կատարել ուսուցանող և միավորային գնահատում: Իրականացնել անհատականացված ուսուցում, կազմել մեծ թվով թեստեր, որը կբացառի իրարից արտագրելու հնարավորությունը: **Ծնողները** կայքի օգնությամբ տեղեկացված կլինեն երեխայի ուսուցման

հաջողությունների և դժվարությունների մասին, ազատված կլինեն տանը երեխային դաս սովորեցնելու անհրաժեշտությունից:

Այնուհետև կայքի աշխատանքային խմբի ղեկավար Վ.Բաղդասարյանը բացատրեց, թե ինչպես կարելի է գրանցվել և օգտվել կայքից, արդյունավետ կիրառել նրա ընձեռած հնարավորությունները դպրոցում և տանը: Ամփոփելով իրենց ելույթը, ԻՄ ԴՊՐՈՅ կայքի աշխատանքային խմբի ներկայացուցիչները հայտարարեցին, որ իրենց ստեղծած կայքի առաքելությունն է բարելավել ուսման որակը, դարձնել այն հետաքրքիր **սովորողների** համար, պարզևել **մանկավարժներին** ստեղծագործելու բերկրանք, իսկ **ծնողներին**՝ գրագետ երեխաներ: